Բաց դռների արշավ կենտրոնում: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել են 2 տեսակի Բաց դռների արշավ՝

- **Սերունդների երկխոսություն**: Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան >> սոցիալական կենտրոնի և Գավառի <<Տնային խնամք Միայնակ տարեցներին>> ծրագրի շահառուներին համախմբել էր Սերունդների Երկխոսություն խորագիրը կրող միջոցառումը: Կենտրոնում տարեցների համար կազմակերպվել էր Բաց-դռների արշավ՝ ներառելով հետևյալ գործողությունները՝
- Փոքրիկ Իշխան կենտրոնի սաները տարեցներին դիմավորեցին գեղարվեստական կատարումներով, կազմակերպեցին շրջայց կենտրոնում և ներկայացրեցին իրենց առօրյան:
- Կենտրոնի Խոհարարության խմբի սաները և տարեցները հատառեղ պատրաստեցին հայկական ավանդական ուտեստներ և սպասքադրեցին տոնական հյուրասիրությունը:
- Կենտրոնի Մեդիագրագիտության խմբի սաները տարեցների համար կազմակերպել էին ինտերակտիվ խաղ, որի շրջանակներում երեխաները և տարեցները կարողացան փազլների միջոցով պատկերել տեխնիկայի զարգացման փուլերը:

Միջոցառումը ամփոփվեց Սերունդների Երկխոսություն խորագիրը կրող քննարկմամբ և նվերների փոխանակմամբ: Արշավին ընդհանուր ներկա են գտնվել **46** մասնակից, որից **17 /5 տղա, 12 աղջիկ/** Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաներ, **2** կենտրոնի շրջանավարտ/ 1տղա, 1 աղջիկ/, Տնային խնամքի **14** շահառու և **1** կամավոր, Հայկական Կարիտասի **13** աշխատակից:

- **Լունա պարային դպրոցի սաները Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնում:** Ս/թ սեպտեմբերի 14-ին, Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնը Բաց դռներ արշավի շրջանակներում հյուրընկալել էր Լունա պարային դպրոցի սաներին: Արշավը համընկել էր Լունա պարային դպրոցի գործունեության 10 ամյակին: Միջոցառմանը ներկա են գտնվել **65** Լունա պարային դպրոցի սան՝ **1** տղա, **64** աղջիկ: Լունա պարային դպրոցի սաներին տրամադրվել է ՓԻ կենտրոնի բակային տարածքը, համայնքային որտեղ իրականացվել են տարաժանր պարային կատարումներ, ժամանցային խաղեր: